ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 07 » հունվարի 2022 թվականի N: 9-ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N 29 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 68-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N:113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 3-րդ կետի 1-ին ենթակետի, 4-րդ կետի, 5-րդ կետի 1-ին ենթակետի, 6-րդ կետի, 7-րդ կետի, 9-րդ կետի 1-ին ենթակետի, 11-րդ կետի, 12-րդ կետի, 16-րդ կետի, 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունիսի 3-ի N:01/09.3/11888-2021 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի N01/04/17321-21 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի ապրիլի 5-ի N:12 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի ապրիլի 3-ի N:50 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված անդամ Իրինա Խաչատրյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Հովհաննես Մաթոսյանի և Գրիգոր Պապոյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Կնյազ Մանասյանի լիազորությունները,

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Մանուշակ Ասլանյանի և Արուս Պետրոսյանի լիազորությունները,

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված՝ անդամներ Տաթևիկ Հարությունյանի և Տիգրան Մարտիրոսյանի լիազորությունները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության առանձին խորհրդի անվանական կազմը 3 տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N:51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N:68-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի հունվարի «07» N 8-ա որոշման

ԱՌԱՆՁԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N 29 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1.	Գալինա Կասեմյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված,
2.	Արիգա Ռաֆայելյան Վաղինակ Հովհաննիսյան Լիլիթ Մուրադյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
3.	Կարեն Վարդանյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Գյումրի համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
4.	Արուս Պետրոսյան Մանուշակ Ասլանյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
5	Տիգրան Մարտիրոսյան Տաթևիկ Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է